ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2024 թվականի N 915-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԸ ՆՎԱՋԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 36-րդ հոդվածը և 68-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) ենթակայության՝

1) «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն 1, գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. Անաստաս Միկոյան 109/8) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (համաձայն N 1 հավելվածի).

2) «Երևանի ջրամատակարարման ուղեմաս» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն 2, գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Արցախի 40) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (համաձայն N 2 հավելվածի)՝

վճարել ընկերություն 1-ի և ընկերություն 2-ի կողմից տեղաբաշխված, պետությանը պատկանող համապատասխան թվով հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված ընկերություն 1-ի և ընկերություն 2-ի կողմից ձեռք բերված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մարման միջոցով, սահմանված կարգով, համապատասխան չափով նվազեցնել այդ ընկերությունների կանոնադրական կապիտալները:

3. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել՝

1) «Հրազդան մարզահամալիր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն 3, գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Հրազդանի կիրճ, թիվ 4) սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը (համաձայն N 3 հավելվածի).

2) «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն 4, գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Նորք-Մարաշ 9-րդ փող., թիվ 123) սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը (համաձայն N 4 հավելվածի):

4. Սույն որոշման հավելվածներով նշված գույքն ամրացնել կոմիտեին:

5. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) մեկամսյա ժամկետում սույն որոշման 3-րդ կետում նշված ընկերություն 3-ի և ընկերություն 4-ի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագրեր՝ պայմանագրերի կնքման, գույքի գրանցման հետ կապված ծախսերն իրականացնելով կոմիտեի միջոցների հաշվին.

2) երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման հավելվածներում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները.

3) 6-ամսյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ընկերություն 1-ի և ընկերություն 2-ի կանոնադրական

կապիտալների նվազեցման հետ կապված կանոնադրությունների փոփոխությունների և պետական գրանցման աշխատանքների իրականացումը.

4) 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկ՝ կոմիտեին հանձնված գույքի հետագա տնօրինման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ